ԳԱՂԱՂ

ՏեսությունՀայր

ՀԱՅԱՍՏԱՆ

«Ֆեստիվալ» երաժշտական փառատոնի տարբերանշանը ոգեշնչված է Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավից:

Սարյանական վառ և արտահայտիչ գույները փոխանցում են հայաստանյան վառ ամառային տրամադրությունը՝ «Ֆեստիվալ»-յան շունչը: Այս տարի լրանում է կտավի ստեղծման 100-ամյակը:

Այս ամառ ԿԳՄՍ-ն և Առաջին ալիքը քեզ հրավիրում են Գավառ և Սիսիան՝ համտեսելու տեղական արտադրանքը, այցելելու թաքնված և հայտնի անկյուններն ու վայելելու համերգային ծրագիրը:

ԳԱՎԱՌ, ՕԳՈՍՏՈՍԻ 12

14:00-19:00 - տեղական արտադրանքի տոնավաճառ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակին հարակից տարածքում
15:00-20:00 - Համերգ տեղացի արտիստների մասնակցությամբ և հյուր արտիստներ Երևանից՝ YereOne Project և OnPlay բենդ
20:00-22:00 - **Մեծ համերգ. Առաջին հատված՝**
«Առաջին ստուդիայի» ծրագիր՝
«Kami Friends»-ի մասնակցությամբ
Արամ MP3
Էրիկ Կարապետյան
Բրյունետ
Սոնա Ռուբենյան
Արսեն Գրիգորյան
Երկրորդ հատված՝
կատարումներով հանդես կգա Արամ MP3-ին
22:00-23:00 – DJ Apostle

Ո՞ՒՐ ԳՆԱԼ ԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Գավառի անձնագիր-հուշապատը գտնվում է Գավառի կենտրոնական հրապարակի տարածքում: Անձնագիր-հուշապատը ներկայացնում է «Բերդի գլուխ» կոչվող վայրում գտնված սեպագիր արձանագրությունը, որը թողել է ուրարտական թագավոր Ռուսան՝ Սարդուրի որդին: Արձանագրությունը ներկայացված է եռալեզու:



Խալդի աստծո քաղաք-տաճարը տեղացիներին հայտնի է «Բերդի գլուխ» անունով: Ամրոցի երկարությունը արևելքից արևմուտք շուրջ 400 մ է: «Բերդի գլխի» հարավարևելյան կողմում՝ Գավառագետի վրա, կա սալաքարերից կառուցված մի կամուրջ, որին տեղացիները Քարե կամուրջ են ասում:

Գեղարքունիքի երկրագիտական թանգարանում ներկայացված են մարզի պատմությանը նվիրված հետաքրքիր կտավներ, գորգեր, հին բնակավայրերի վերարտադրություններ և Սևանա լճի պատմությանը նվիրված նմուշներ:

Հասցե՝ ք. Գավառ, Զորավար Անդրանիկ 18
Օգոստոսի 12-ին բաց է 11:00-17:00

Գավառի պետական դրամատիկական թատրոնը կազմավորվել է 1935 թ.: 1959 թվականին կոչվել է Լևոն Քալանթարի անունով: Թատրոնի շենքը վերակառուցվել է 2018 թվականին. այն մարզի մշակութային կարևորագույն օջախներից մեկն է:

Հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 8

Սամվել Քոչարյանցի պուրակը գտնվում է Գավառի կենտրոնական հրապարակի հարևանությամբ: Այստեղ տեղադրված է ռազմական միջուկային զենքի գլխավոր կոնստրուկտոր, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ԽՍՀՄ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, նորբայազետցի Սամվել Գրիգորի Քոչարյանցի կիսանդրին: Այն բացվել է 1987 թվականի հոկտեմբերի 3-ին: Պուրակը հիմնանորոգվել է 2020 թվականին:

Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող կոթողը տեղադրված է քաղաքի կենտրոնում՝ Ս. Աստվածածին եկեղեցու հարևանությամբ: Հուշարձանը բազալտե սրբատաշ քարից է, 14 մետր բարձրությամբ՝ զարդարված մանրաքանդակներով: Կոթողի ճարտարապետը Ռ. Իսրայելյանն է, քանդակագործները՝ Ռ. Եկմալյանը և Բ. Հովհաննիսյանը:

Կոլոտ Հայրապետի բրոնզաձույլ արձանը նվիրված է նոր բայազետցի բարերար, իր ժամանակի մեծանուն առևտրական, հայրենասեր Հայրապետ աղա Խաչատրյանին (Կոլոտ): Արձանը տեղադրվել է 2015 թվականին՝ մահվան 100-րդ տարելիցի կապակցությամբ: Գտնվում է իր կառուցած դպրոցի (այժմ՝ «Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոց») հարևանությամբ: Նրան «կոլոտ» էին ասում, քանի որ կարճահասակ էր: Նոր բայազետցիներն առանձնահատուկ սիրով են հիշում և փայփայում նրա անունը:

Գավառի կենտրոնում գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված ժողովրդի միջոցներով 1905 թ.: Երկրագիտական թանգարանում պահպանված փաստաթղթերի համաձայն՝ եկեղեցու կառուցումը սկսվել է 1902 թվականին՝ հոգևորական նշանավոր գործիչ Խ. Մուրադբեկյանի նախաձեռնությամբ և ճարտարապետ Վ. Միրզոյանի նախագծով: Սբ. Աստվածածինը՝ Գեղարքունիքի մայր եկեղեցին և առաջնորդարանը, օծվել է 1905 թ.-ին: Առաջին պատարագը մատուցել է Խրիմյան Հայրիկը:

Ս. Աստվածածին եկեղեցուց ոչ հեռու գտնվում է 1848 թ. կառուցված Ս. Կարապետ բազիլիկ եկեղեցին: Եկեղեցին խորհրդային տարիներին վերածվել էր պահեստի, իսկ այնուհետև անուշադրության էր մատնվել: 2012 թ. վերանորոգվեց և վերաբացվեց որպես գործող եկեղեցի:



Աժդահակ լեռնագագաթը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական հատվածում, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին: Աժդահակը Գեղամա լեռնավահանի ամենաբարձր կետն է (3597 մ): Գագաթին կից՝ հյուսիսարևմտյան կողմում, կա խառնարան՝ լցված ջրով:

Գռիձորի հովտի հատակի երկարությամբ ձգվող խզվածքային գոտուց բխում են բազմաթիվ հանքային աղբյուրներ: Այստեղ է գտնվում աշխարհի ամենասառնորակ ջրով աղբյուրներից մեկը՝ +4˚C: Լեռնային հովտի վերջնամասում Գռիձոր գետի ջրերը, 3 մ բարձրությունից գահավիժելով, առաջացնում են ջրվեժ:

Գեղամա լեռնավահանի մերձգագաթային սարավանդում է գտնվում Ակնա լիճը: Ջրհավաք ավազանի մակերեսը զբաղեցնում է մոտավորապես 8.2 կմ2, որից 0.53 կմ2 զբաղեցնում է լճի հայելու մակերեսը: 1959 թվականից վերածվել է լիճ-ջրամբարի:

Հայրավանք (IX-XII դդ.) վանական համալիրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի հյուսիսարևելյան մասում՝ Սևանա լճի ափին, ժայռեղեն հրվանդանի վրա: Պահպանվել է եկեղեցին՝ արևմուտքից կից գավթով: Գավիթն ունի երդիկավոր, ութանիստ, շթաքարեզարդ գմբեթ՝ շարված սև և կարմիր շեղադիր քարերից: Վանքի բազմաթիվ վիմագրություններից հնագույնը կատարված է 1211 թ.:



Նորատուս բնակատեղին հիմնադրվել է դեռևս Նոր քարի դարում: Նորատուսը առավելապես հայտնի է իր բազմաթիվ խաչքարերով՝ նշանավոր «խաչքարերի անտառով»: Պահպանվել են հնավանդ կոթողներ և հուշասյուների բեկորներ, վաղ շրջանի խաչքարեր:

ԿԵՑԱՎԱՅՐԵՐ ԳԱՎԱՌՈՒՄ

«ՄԱՐԴՈՅԱՆ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 98 51 02 42
Գեղարքունիքի մարզ, Գավառ,
Սայաթ-Նովայի փ. 3

«ԽԱԼԴԻ ՁԱՆԳԻՁՈՐ»
+374 94 38 08 64
Գեղարքունիքի մարզ, Գավառ,
Կենտրոնական հրապարակ 4

«ՕԱՁԻՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑ ԵՎ ՌԵՍՏՈՐԱՆ
+374 93 35 35 08
Գեղարքունիքի մարզ, Սևան-Մարտունի
մայրուղի Մ10, 28 հատված

«ՎԵՐԱՂԱՐՁ»
+374 93 92 97 19
Գեղարքունքի մարզ, Նորատուս 23

«ԱԼՄԱՎ» ՌԵՍՏՈՐԱՆ-ՀՅՈՒՐԱՆՈՑ
+374 43 00 17 00
Գեղարքունիքի մարզ, Գավառ,
Ձորավար Անդրանիկի 1-ին փողոց

«ՃՈՎԱՁԱՐԴ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 43 26 54 54
Գեղարքունիքի մարզ,
Ծովազարդ

«ՄՈՐԻ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 98 32 20 00
Գեղարքունիքի մարզ, Գավառ,
Ծաղկաշեն, 3-րդ փողոց 29

«ԳԵՂԱՄԱ» ՊԱՆՍԻՈՆԱՏ
+374 94 21 61 90
Գեղարքունիքի մարզ, Հայրավանք
վարչական շրջան, Մարգարիտ փողոց

«ՃՈՎԱՁԱՐԴ ՍՈՃԻՆԵՐ»
+374 93 10 17 15
Գեղարքունիք մարզ, Սևան
Մարտունի Մ10 մայրուղի

«ԾԱՂԿԱՎԱՆՔ» ՄԻՁՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
+374 99 89 30 01
Գեղարքունիքի մարզ,
Կարմիրգյուղ - Սարուխան ճանապարհ

«ՁՈՁ ՏՈՒՆ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ
+374 93 72 44 55
Գեղարքունիքի մարզ,
Գավառ, Իսահակյան փ.

«GUEST HOUSE AREVIK»
+374 93 00 13 33
Գեղարքունիքի մարզ, Գավառ,
Գ. Միքայելյան փ.

«ՄԵՐ ԱՅԳԻՆ»
+374 44 84 11 13
Գեղարքունիքի մարզ, Գավառ

«ՀՈԼԻ ՄՈՏ»
+374 77 98 74 44
Գեղարքունիքի մարզ, Գավառ,
Արծրունի եղբ. փ.

«FAZENDA HOUSE»
+374 94 57 27 17
Գեղարքունիքի մարզ, Նորաշեն

«GRACIA HOUSE»
+374 98 31 31 11
Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի ափին՝
Բերդկունքի հատվածում

ՍՐՃԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՏՈՐԱՆՆԵՐ ԳԱՎԱՌՈՒՄ

«ALMAV» RESTAURANT
Ռեստորան
+374 77 11 80 60
Գավառ, Զորավար Անդրանիկի 1-ին փ.

«MANU KING»
Արագ սնունդ
+374 77 00 12 95
Գավառ, Սայադյան փ. 41

«ԳԱԼԱՔՍԻ» ՍՐՃԱՐԱՆ / «GALAXY» CAFE
Ռեստորան, սրճարան
+374 77 44 03 38
+374 55 44 33 01
Գավառ, Ազատության 32

«ԲԱՐԻ ԱԽՈՐԺԱԿ ԲԻՍՏՐՈՅՈՒՄ»
Արագ սնունդ
+374 98 23 21 43
Գավառ, Բոշնաղյան փ.

«OAZIS» HOTEL & RESTAURANT
Ռեստորան, սրճարան
+374 93 35 35 08
Սևան - Մարտունի մայրուղու
M10 28 հատված, Նորատուս

«ՀԱՍՈՅԻ ՄՈՏ» ԹՈՆԻՐԱՏՈՒՆ
Արագ սնունդ
+374 98 31 47 74
Գավառ, Բարեկամության փ.

«ԾԱՂԿԱՎԱՆՔ» ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Սրճարան
+374 41 70 07 03
+374 98 28 76 00
Կարմիրգյուղ, Զ. Շհոյան 240

«ԱԲՈՅԻ ՄՈՏ»
Ռեստորան
+374 98 96 95 41
Գավառ, Բարեկամության փ.

«ԱՐՔԱՅԱԿԱՆ ՁՈՒԿ» / «ROYAL FISH»
Ռեստորան
+374 55 05 50 10
M10 1213, Գավառ, Հայաստան

«ԱՅԳԻ» ՍՐՃԱՐԱՆ-ՌԵՍՏՈՐԱՆ
Ռեստորան, սրճարան
+374 77 69 12 00
Գավառ, Գրիգոր Նարեկացու 3

«ՎԵՐԱԴԱՐՁ» ՀՅՈՒՐԱՆՈՑ ԵՎ ՌԵՍՏՈՐԱՆ
Ռեստորան
+374 93 92 97 19
Նորատուս 23

«ԱՆՏԱՌԱՅԻՆ»
Արագ սնունդ
+374 94 46 68 19
Գավառ, Սայադյան փ.



ՖԵՍՏԻՎԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Օգոստոսի 26-ին «ՖԵՍՏԻՎԱՌ» երաժշտական
փառատոնը կգունավորի Սիսիանի ամառային երեկոն,
կմեկտեղվեն Սիսիանի բնությունն ու յուրօրինակ
երաժշտական ռիթմերը:

Սիսիանում կայանալիք համերգի մանրամասները՝ շուտով:

ՀՀ ԿԳՍՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՔԻՆ ՍԼԻՔ